ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2022թ. փետրվարի 27-ից մարտի 5-ը շրջակա միջավայրի նախարարի տեղակալ Աննա Մազմանյանի՝ Նայրոբի (Քենիայի Հանրապետություն) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **<u>ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ</u>**
   Աննա Մազմանյան

2. **<u>ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ</u>**
   Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

3. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ</u>**
   Նայրոբի (Քենիայի Հանրապետություն)
   2022թ. փետրվարի 27-ից մարտի 5-ը

4. **<u>ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ</u>**
   ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր

5. **<u>ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ</u>**

   Մասնակցություն ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ասամբլեայի վերսկսված հինգերորդ նստաշրջանին (UNEA-5.2) և հատուկ նստաշրջանին՝ նվիրված ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի ստեղծման հիսունամյակին (UNEP@50):

6. **<u>ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ</u>**

   1. Սևանա լճի էկոհամակարգի պահպանություն,
   2. ջրային ռեսուրսների աղտոտվածություն,
   3. թափոնների կայուն կառավարում (այդ թվում՝ կոշտ թափոնների կառավարում և աղբի տեսակավորման խնդիրներ),
   4. կլիմայի փոփոխություն,
   5. ցածրածխածնային զարգացում:

7. **<u>ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐ</u>**

- **Ելույթ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ասամբլեայի վերսկսված հինգերորդ նստաշրջանի ընթացքում**

  Ելույթում նախարարի տեղակալը անդրադարձել է համաշխարհային բնապահպանական մարտահրավերներին և այդ մարտահրավերներին դիմակայելու գործում Հայաստանի դերին:
  Նշվել է, որ մեր երկիրը նշանակալի ջանքեր է գործադրում էներգիայի վերականգնվող աղբյուրների մասնաբաժնի ավելացման հաշվին ցածրածխածնային զարգացման ապահովման համար, ինչպես նաև

անտառապատ տարածքների ավելացման և կենսաբազմազանության պահպանության ուղղությամբ:
Նախարարի տեղակալն անդրադարձել է նաև 2020թ. Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում սանձազերծված պատերազմի արդյունքում առաջացած բնապահպանական խնդիրներին:
Փոխնախարարն ընդգծել է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության տեսլականը կանաչ փոխակերպման և կլիմայի փոփոխության դիմագրավման ուղղությամբ հիմնված է կանաչ և ցածրածխածնային աճի սկզբունքների վրա, ինչպես նաև շեշտել, որ մաքուր և շրջանաձև տնտեսության հիմունքներով զարգացող արդյունաբերությունը համարվում է մեր կառավարության առաջնահերթություններից մեկը:
Նախարարի տեղակալը ևս մեկ անգամ վերահաստատել է Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության պատրաստակամությունը համագործակցելու ՄԱԿ-ի բոլոր անդամ երկրների, գործակալությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և մասնավոր հատվածի հետ՝ գլոբալ էկոլոգիական օրակարգի առաջմղման նպատակով:

- **Հանդիպում ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի Եվրոպայի տարածաշրջանային տնօրեն պարոն Բրունո Պոզզիի և Հանրային գործընկերության և ռեսուրսների մոբիլիզացիայի ղեկավար տիկին Քեթի Աուտերի հետ**

Քննարկվել են շրջակա միջավայրի ոլորտում համագործակցության առաջնահերթությունները, առաջիկա երկու տարիների անելիքների ճանապարհային քարտեզն ու առկա խնդիրների լուծման եղանակները:

Մասնավորապես անդրադարձ է կատարվել՝

1. Սևանա լճի էկոհամակարգի պահպանությանը և դրան ուղղված ծրագրերին,
2. ջրային ռեսուրսների աղտոտվածության խնդրին,
3. թափոնների կայուն կառավարման և առավել մաքուր արտադրությունների խթանման հիմնահարցին,
4. «ավելի կանաչ» գործելակարգերի առաջընթացի և հմտությունների զարգացման հնարավորություններին:

- **Հանդիպում ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի ղեկավարի տեղակալ Սոնյա Լեյթհոն - Քոնեի հետ**

Հանդիպման ընթացքում քննարկվել են շրջակա միջավայրի ոլորտում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, մասնավորապես՝
1. Հայաստանյան պատվիրակությունն առաջարկել է, որ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիրը Հայաստանում գրասենյակ ունենա: Դա կօգնի առավել սերտ ու արդյունավետ համագործակցել և ոլորտում առկա խնդիրներին լուծումներ գտնել,

2. կողմերը քննարկել են կոշտ թափոնների կառավարման և աղբի տեսակավորման խնդրի վերաբերյալ պետական քաղաքականությունն ու այդ համատեքստում հնարավոր միջազգային համագործակցությունը:

- **Հանդիպում Կոստա Ռիկայի շրջակա միջավայրի և էներգետիկայի նախարար տիկին Անդրեա Մեզայի և Կոլումբիայի շրջակա միջավայրի և կայուն զարգացման նախարար պարոն Էդուարդո Կոռռեայի հետ "High Ambition Coalition for Nature and People" նախարարական հանդիպման ընթացքում**

Քննարկվել են Կենսաբազմազանության կոնվենցիայի շրջանակներում կողմ երկրների 15-րդ հանդիպմանն ընդառաջ առաջնահերթություններն ու ակնկալիքները, ինչպես նաև էկոհամակարգերի պահպանության վերաբերյալ մի շարք հարցեր:

Քննարկվել է հաջորդ հանդիպումը ՀՀ-ում անցկացնելու հնարավորությունը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Հայաստանը միացել է ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ասամբլեայի կողմից ընդունված մի շարք բանաձևերի:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Առաջարկվել է, որ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիրը Հայաստանում գրասենյակ ունենա: Դա կօգնի առավել սերտ ու արդյունավետ համագործակցել և ոլորտում առկա խնդիրներին առավել արդյունավետ կերպով լուծումներ գտնել:

Շրջակա միջավայրի նախարարի տեղակալ

Աննա Մազմանյան

10.03.2022թ.